

Աւագեան քոյրերուն, որոնք գեղեցիկ ականդուրիւն հաստատած են ամէն տարի մեր շրջանաւարտներուն նուէրներ ընծայելը:

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ
Տեսուչ Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

2017-2018

Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեան,
Հուսարարապետ Ս. Աթոռոյս,
Հոգեշնորհ Հայրեր,
Յարգելի ծնողներ, ներկաներ և շատ սիրելի շրջանաւարտներ:

2017-2018 ուսումնական տարեշրջանը ահաւասիկ հասաւ իր աւարտին, մեր յուշերուն մէջ դաջելով բազմաթիւ գեղեցիկ պահեր ու անակնկալներ:

Ոմանց համար այն եղաւ նոր արկածախնդրութեան սկիզբ, իսկ ոմանց համար ալ առաքելութեան մը աւարտ: Այսօր 12-րդ դասարանի աշակերտներուն համար պատրաստուած այս յատուկ երեկոն աւարտ մըն է, որ պիտի թափ առնէ նոր սկիզբով: Սկիզբ մը իրական աշխարհի մէջ, ուր իրենց սորվածը գործի պիտի դնեն: Այս Վարժարանէն, ձեր ակումբներէն և վերջապէս ձեր տուններէն զինուած ու պատրաստուած դուրս կու գաք շաղուելու կեանքի շաղախին և դիմադրելու անոր ալիքներուն, հասնելու համար ձեր նպատակակէտին: Բարի ճանապարհ կը մաղթեմ և կը խրատեմ որ չհեռանաք ձեր բոյնէն ուրկէ ծնունդ առիք և աճեցաք:

11 տարիներ ետք հասաւ այն պահը, երբ իմ ուսերուս դրուած այս սուրբ պարտականութիւնը հանդէպ սաղիմահայութեան, վար կը դնեմ՝ համեստաբար գոհունակութիւն ունենալով սրտիս մէջ, թէ կարողացայ նոր աւիւն, խանդ ու եռանդ, ինչպէս նաեւ հետաքրքրութիւն բերել Սրբոց Թարգմանչացի ներսէն ու դուրսէն:

Ուրախ եմ որ այս տարիներու ընթացքին կարողացայ իմ ծառայութեան բաժինը բերել այս հրաշալի և բացառիկ գաղութին: Ներշնչուեցայ գաղութի անդամներէն և քաջալերուեցայ արդիւնքէն: Հպարտութեան զգացում մը կ'ապրիմ այսօր, երբ գիտեմ թէ Սրբոց Թարգմանչաց վարժարանի նախնիներուն՝ Նշանեան, Իսրայէլեան, և Գաբրիէաններու շարանին մաս կը կազմեմ: Վարժարանի մը, որ շրջանաւարտ սերունդներ հասցուց ու անոնց փոխանցած դաստիարակութեամբ այս գաղութին երիտասարդ ու առողջ ըլլալը ապահովեց ու կը շարունակէ ծառայել նոյն նպատակին:

Այս զգացական երեկոն, գոնէ ինծի համար, քաջ գիտակցելով՝ թէ որպէս տեսուչ վերջին անգամ ըլլալով այստեղ կեցած իմ ուղերձս պիտի հաղորդեմ ձեզի, իւրայատուկ կերպով պիտի յիշեմ ու իմ սրտին մէջ պահելով պիտի տանիմ, ուր որ ալ գտնուիմ:

Կարելոր է այստեղ յիշել և ճանչնալ քանի մը անձերու անուններ, առանց որոնց այս Վարժարանը յաջողութիւն պիտի չունենար: Անոնք եղան իմ վստահութեան և ապաւինման ժայռերը և այս գաղութի զաւակներուն մասին մտածողները: Հակառակ

բոլոր դժուարություններուն կամ հարուածներուն, անոնք խոնարհաբար տքնեցան ու իրենց աշխատանքով ու այս գաղութին ու երիտասարդներուն հանդէպ ունեցած մեծ սիրով աւելի ու աւելի ջանք թափեցին յաջողութեան հասնելու համար: Անոնք եղան Վարժարանիս Ռահվիրաները արդիացման, նորակերպութեան և բարձրացման, յանձինս՝ փոխ-տեսուչ Պարոն Միհրան Տէր Մաթոսեանի, Քէյթի Պաքրճեանի և Ազնիւ Պաղտասարեանի: Որոնց ի սրտէ շնորհակալ ենք իրենց բերած և կատարած բոլոր մեծամեծ ծառայություններուն համար: Անսահման է այս խումբի մատուցած ծառայությունը Վարժարանիս և գաղութին: Վարձքերնիդ կատար:

Յատուկ շնորհակալական խօսք ունիմ Վարժարանիս ուսուցչական կազմի բոլոր անդամներուն, իրենց վրայ դրուած ուսուցչութեան պարտականությունը յաջողութեամբ կատարելու համար: Աշակերտութեան և տեսչութեան կողմէ խորին շնորհակալութիւն կը յայտնենք անոնց անկաշկանդ ծառայութեան համար:

Շնորհակալութիւն կը յայտնենք նաեւ Հայրենիք, Ամերիկայ և այլուր գտնուող, Սրբոց Թարգմանչաց Վարժարանի բոլոր բարեկամներուն և աջակցութիւն ցուցաբերող հաստատություններուն և անհատներուն:

Յատուկ շնորհակալութիւն կը յայտնեմ Պատրիարքանիս և անոր գահակալին իրենց ցուցաբերած աջակցութեան և օժանդակութեան: Շնորհակալութիւն Լուսարարապետ Սրբազան Հօր, իր ցուցաբերած ազնուական կեցուածքին, մեր բոլոր թերութիւններուն հանդէպ ան հասկցող հայրը հանդիսացաւ ու կը շարունակէ մնալ: Շնորհակալ եմ Սրբազան Հայր, մեր իսկական հայր ըլլալու, հասկացողութեան և համբերութեան համար:

Հայրենիքի մէջ, Ամերիկայի մէջ և այլուր, Սրբոց Թարգմանչաց Վարժարանի բոլոր բարեկամներուն և աջակցութիւն ցուցաբերող հաստատություններուն և անհատներուն մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք, յանձինս Արժանապատիւ Տէր Մարտիրոս Քահանայ Զէւեանի, Տիար Օհան Դարիպեանի, Հիւսիսային Ամերիկայի տարբեր ծովափերու մէջ գտնուող երիտասարդաց յանձնախումբերու:

Ս. Աթոռոյս Ելեւմտից գրասենեակի աշխատակազմին նաեւ իմ խորին շնորհակալութիւնս կու գամ յայտնել ամենայն համաձայնութեամբ գործակցելու և օժանդակելու մեր ներկայացուցած ծրագիրներուն:

Շնորհակալութիւնս կը յայտնեմ գաղութիս միութիւններուն և միութենականներուն: ՀԵՄ, ՀՄՀՄ, ՀՕՄ և Երուսաղէմի Բարեսիրաց միութեան իրենց օժանդակութեան և համագործակցութեան համար: Միութիւնները և վարժարանը պարտին միշտ միասնաբար գործակցիլ ի շահ մեր գաւակներուն:

Շնորհակալութիւն ունիմ յայտնելու բոլոր այն ծնողներուն որոնք Վարժարանիս տեսչութեան կողքին կեցան տարիներու ընթացքին և մեզ քաջալերեցին մեր ծառայութեան մէջ:

Այս ուսումնական տարուայ աւարտին, երկար տարիներու ծառայութենէ ետք Տիար Մայքըլ Զաքարեան կը դադրի պաշտօնավարելէ: Վարժարանը և աշակերտութիւնը շնորհակալ են Պարոն Մայքըլի բերած ծառայութեանը: Ինչպէս նաեւ Վարժարանիս օտարազգի ուսուցիչներէն այս տարուայ աւարտին կը դադրին պաշտօնավարելէ, Տոքթ. Շլոմիթ Մարկօ, Օր. Ֆէյկըլ Թրէյն, Տիկին Շիրին Մինասեան, Օր. Նաթալի Նաճարեան և Տիար Միհրան Գրիգորեան: Տեսչութիւնս շնորհակալութեամբ կ'արձանագրէ անոնց ծառայությունները աշակերտութեան և գաղութիս:

Սրբոց Թարգմանչաց Վարժարանը կը վայելէ բացառիկ ուսուցչական կազմ մը որոնք տիպար օրինակ են, համագործակցութեան ընդօրինակելի ներկայացուցիչներ:

Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարութիւնը ընդառաջելով Տեսչութեանս խնդրանքին շքանշանով և պատուոյ գիրով կը պատուէ 10 տարիներու և աւելի ծառայություն ունեցող ուսուցիչները հայ կրթօճախներու մէջ: Այս առթիւ պատին ունինք յայտնելու թէ Սրբոց Թարգմանչաց Վարժարանէն չորս պաշտօնեաներ արժանացան այս շքանշաններուն և պատուոյ գիրին:

- Տիար Մայքըլ Զաքարեան, իր 20 տարիներէ աւելի ծառայութեան համար:

- Վարժարանիս Փոխ տեսուչ, Պարոն Միհրան Տէր Մաթոսեան, իր 10 տարիներու անսակարկ ծառայութեան համար: Պարոն Միհրան տեսչութեանս տարիներուն ինչպէս քիչ առաջ ըսի հաստատուն ժայռը եղաւ որու վրայ հիմնելով այս դպրոցի ուսումնական ծրագիրը թեւեր տուաւ դէպի վեր բարձրանալու և ըլլալու այն դպրոցը որու մասին բոլոր նրուադէմը կը խօսի:

Պատուոյ գիր կը ստանայ Տիկին Անճելա Տիգպիգեանը իր ծառայութեան այս Վարժարանին և Հայ աշակերտութեան, մշակութային, հայագիտական նիւթերու և հայապահպանման ծառայութեան համար:

Վերջապէս շնորհակալ եմ Ձեր բոլորէդ որ այսօր այստեղ ներկայ էք և համբերութեամբ կ'ունկդրէք մեր երկար զեկոյցը:

Վարժարանիս երկրորդական բաժինը 1952 թուականէն սկսեալ կը հետեւի Անգլիական GCE ուսումնական ծրագիրին: Սոյն ծրագիրը համաշխարհային ճանաչում ունի որ կը դասաւանդուի աւելի քան 80 երկիրներու մէջ որպէս բարձր ուսումնական ծրագիր: Ներկայիս դպրոցը կը ներկայացնէ 4 A level և 8 O level նիւթեր, որոնցմով աշակերտը դիւրութիւն կ'ունենայ ընդունուելու տեղական և այլ համալսարաններ:

Սոյն տարուայ ընթացքին յաջողութեամբ անցան Վարժարանիս և Անգլիական ուսումնական ծրագրի (GCE) պետական քննութիւնները: Վարժարանիս յաջողութիւնը կարճանագրենք 80 տոկոսով: Աշխատանքը և արդիւնքը համաշափ են ըստ մեր աշակերտներուն և ուսուցչական կազմին:

Ուրախութեամբ կը տեղեկացնենք ներկաներուն թէ մեր նախկին շրջանաւարտներէն այսօր կը յաճախեն տարբեր համալսարաններ հետեւելով բժշկական, ճարտարապետական, իրաւաբանական, միջազգային հարաբերութեանց և այլ նիւթերու մէջ որոնք գաղութիս համար պարծանք են:

Վարժարանը նաեւ բարձր մակարդակի վրայ կը դասաւանդէ չորս լեզուներ, Հայերէն, Անգլերէն, Արաբերէն և Եբրայերէն: Աշակերտներ երբ շրջանաւարտ կ'ըլլան Վարժարանէս հմտօրէն կը տիրանան վերոյիշեալ լեզուներուն:

Սրբոց Թարգմանչացի համար Հայերէն լեզուն և հայագիտական նիւթերը սիւնն ու անկիւնաքարն են: Վարժարանիս ամենակարեւոր առաքելութեան հատուածն է որու միջոցաւ պիտի կարողանանք կերտել ազգասէր և եկեղեցասէր Հայ երիտասարդներ: Քաջ տեղեակ ենք դժուարութիւններուն ըլլալով Հայկական վարժարան Սփիւրքի մէջ սակայն Վարժարանիս տեսչութիւնը ջանք չի խնայեր յաղթահարելու այդ դժուարութիւնները՝ տալու պայծար ապագայ մեր աշակերտներուն:

Դպրոցական նութերէն զատ Վարժարանս ունի նաեւ արտ-ուսումնական ծրագիրներ, ուր կը քաջալերենք մեր աշակերտներու մասնակցութիւնը, անոնց տալով այլ միջոցներ դրդուելու և ուրախութեամբ մօտենալու դպրոցին կողմէ հրամցուցած ուսումնական ծրագիրներուն:

Վարժարանիս յաջողութիւնը վերջապէս կը չափենք այն իրողութիւնով թէ գաղութիս երեխաներուն 95 տոկոսը այսօր կը յաճախեն Սրբոց Թարգմանչաց Վարժարան, երբ տասը տարիներ առաջ միայն 60 տոկոսը կու գար: Այս հպարտանք է մեր Պատրիարքարանին, Տեսչութեան, ուսուցչական կազմին և գաղութին:

Կրկին կը շնորհաւորեմ շրջանաւարտ աշակերտները և անոնց ծնողները: Թող Ամենակալն Աստուած յաջողութեամբ պսակէ ձեր երազած բոլոր նպատակները և ծրագիրները:

ՆՈՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԶԱՋԵԱՆ

Տեսուչ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի